



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

71

77



ՆՅՄ ԺՈՂՈՎՈՒՐԴԵՆ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՍՍԿՎԱ 1931



23 MAY 2013

11255


\* \* \*

Թարգմ. Ն. Տ. Մ.

677  
45

Այս գրքույկը տալիս է մեր կարմիր գնդերից մեկի կոմիսարի հիշողութիւնները: Պատկերը առնված է այն ժամանակից, յերբ համաշխարհային բուրժուազիան մահացու սարսափով բռնված (կարմիր զորամասերի արագընթաց արշավից դեպի Վարշավա) լեհերին ոգնելու համար ձեռք առավ բոլոր միջոցները: Արևմուտքից Լեհաստան ելին գնում անվերջ շարքերով գնացքները, լի հրազեններով ու մարզիչ-ոֆիցերներով: Համաշխարհային կապիտալիզմը և համաշխարհային պրոլետարական հեղափոխութիւնը ընդհարվել էլին: Կարմիր բանակը իր արագընթաց արշավի ժամանակ կտրվելով իր թիկունքից, ընկել եր այդ կովում ծանր դրութեան մեջ, կանգ եր առել և շատ տեղերում ստիպված եր դիմել ինքնապաշտպանութեան կամ նահանջի: Բայց, յետ նահանջելով և պաշտպանվելով, նա ծանր կորուստներ եր պատճառում թշնամուն և վերջիվերջո ստիպեց նրան համաձայնվել այնպիսի հաշտութիւն կնքել, վորը ավելի նվազ ձեռնտու յեր լեհերի համար, քան այն, վոր առաջարկում եր 1920 թվին խորհրդային իշխանութիւնը՝ չկամենալով պատերազմել Լեհաստանի դեմ: Այս գրքույկի նյութը կազմում է Կարմիր բանակի գնդերից մեկի պաշտպանութեան և նահանջի պատմութիւնը:

Главлит А—72787    Заказ № 2436    Тираж 4000 экз.  
 Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва,  
 Шлюзовая набережная, 10.



## ԲԵՐԵՋԻԱՆԱՅԻ ՎՐԱ

ՃԱՀԻՃՆԵՐՈՒՄ

Յերրորդ օրն է, վոր մեր գունդը գտնվում է ճահճի մեջ, սե, խորը Բերեզինա գետի մյուս ափին: Մարտիկները մինչև ծնկները խրված են կանաչագույն կեղտոտ ջրի մեջ: Ժամանակը անցնում է ճանձրալի:

Յերեկով դեռ վոչինչ, կարելի չէ դիմանալ մայիսյան արեգակը ջերմացնում է մարդկանց սառած մարմինները և չորացնում թրջված շինելները: Բայց յերբ հասնում է յերեկոն, յերբ գետից և ճահճներից բարձրանում է մառախուղը և թանձր շղարշով պատում է թփերն ու ակոպները, — նեխված խոնավությունը անտանելի կերպով սեղմում է մարմինը ու թափանցում մինչև վոսկոտների ծուծը: Մառախուղի ծանր ալիքները վրադ են ընկնում և, կարծես խեղդում են: Անգոր փորձեր ես անում ազատվելու այդ սառցային գրկախառնությունից, մեկ վեր ես թռչում, բռնելով

ակոպի լպրծուն պատերից, վորոնք սողում-դուրս են պրծնում ձեռքերիցդ, մեկ նորից պառկում ես ցուրտ, կակուղ ու մածուցիկ տղմի մեջ:

Տանջվելով ու անիծելով ճահճը, լեհերին, իսկ յերբեմն նաև իրենց հրամանատարներին, մարտիկները անհամբեր սպասում են արեգակի ծագելուն: Չանձրալի անցնում է գիշերը մինչև արևածագը, բայց առավոտից, արշալույսի հետ միասին ակոպները զգալի կերպով կենդանանում են: Մարտիկները շարքերով ու խմբերով, հերթով շտապ անցնում են թիկունքը, վորպեսզի այնտեղ յեռացած ջուր խմեն: Դա մի սովորական դեղնա-կավագյուն յեռացրած ջուր է սուրճի թեթև խառնուրդով, վորից գազարի և վարսակի հոտ է փչում, վոր խիստ համեղ խմիչք է թվում գինվորներին:

Մեր մոտիկ թիկունքում, մեր յետևում գտնվող Բերեզինան, վորը գիշերով նմանվում է մռայլ, սև ոճի, — լուսավորվում ու փայլում է բյուրեղանման ցայտումներով: Սակայն ցերեկը արևի, ջերմության ու կենսուրախության հետ միասին կենդանանում է նաև գիշերով հանդարտվող մարտական կյանքը:

Փայլելով իրենց պողպատե թևերով և, թռչունի նման պատռելով կապույտ ամպերը, թռչում են լեհական ոդանավերը: Նրանք իջնում են մինչև ակոպները (խրամատ), վեր ու վար են սավառնում և շաղ են տալիս մեր վրա պուլեմյոտի գնդակներ: Ակոպները պատասխանում են կատաղի, սակայն անկանոն հրացանաձգությամբ: Ողային ավազակները համարձակ թռչում են գետի մյուս ափը, դեպի մեր թիկունքը ու հրագեն կրող արոզները: Արոզների մեջ բարձրանում է խուճապ, աղաղակ: Իսկ մեր ոդանավերը չկան

ու չկան... Նրանք գործում են ուրիշ տեղ, բայց մեզ թվում է, վոր մեզ մոռացել են: Բոլորն ել չարանում են: Մարտիկները տրանջում են և յերբ յերեկոները գնդի հրամանատարը կոմիսարի հետ միասին այցելում են ակոպները, բոլոր անկյուններից անհամբեր հարցեր են տրվում:

—Յերբ կհանեք մեզ ճահճից:

—Յերբ պիտի յերթանք կովելու:

Գնդի հրամանատարը, վոր կարճահասակ, շիւ աչքերով ու մուգ խորտյաշ մազերով մի մարդ է, լրջորեն, համբերությամբ բացատրում է մարտիկներին գործի դրությունը: Բայց այդ բացատրությունները չեն գոհացնում: Ամենքն ել հասկանում են այդ ճահճային լողարանի անհրաժեշտությունը, սակայն յուրաքանչյուրը կարծում է, վոր հանգամանքները արդեն փոխվել են և ահա շուտով հրաման կստացվի տեղից յելնելու: Բայց ահա արդեն անցել է մի շաբաթ, յերկու շաբաթ, մի ամիս, իսկ պատերազմական դրությունը նույն «անփոփոխ» դրության մեջ է: Չանձրույթը սոսկալի յե: Ամեն մեկը մանրագնդին ուսումնասիրել է իր ակոպային հարևանին, գիտե, թե ով ինչ է մտածում: Բոլոր պատմությունները, այդ բոլոր անվերջ հեքիաթները տերտերի և զինվորի, բուրժույի և մշակի, օֆիցերի և դենշչիկի մասին կրկնված և ծամծամված են մի քանի անգամ և նրանցից մարդու սիրտ է խառնում:

\* \* \*

Դիմացի ափը, վոր մեր մոտավոր թիկունքն է կազմում, անտառոտ է և չոր: Այնտեղ են գտնվում

մեր աբոզը և գնդի շտաբը: Մենք նախանձում ենք ամենքին, վորոնք «այն ափումն» են գտնվում:

Լեհական ակոպները մեզնից հինգ վերստ հեռու մի բարձրավանդակի վրա յեն յինված: Ճահիճը չի հասնում նրանց: Նրանք ծածկվել են մանր թփերով, վորոնց մեջ տեղ-տեղ յերևում են փշերից կազմած տեղեր:

Ուղբեր են գտնվում նրանց ակոպներում: Շնտ են: Հայտնի չե: Իսկ հարկավոր է իմանալ: Արդեն մի քանի անգամ գնդի հետախույզ խումբը չափչփել է ճահիճը, մի քանի անգամ հասել է թշնամու ակոպներին: Բայց լեհական պահապան զինվորները աչալուրջ են: Դժվար է նրանց խաբել և գերի վերցնել նրանցից:

Այդ հետախուզողներից մեկի ժամանակ, յերբ գնդի հրամանատարը համառորեն պահանջում եր մի գերի բռնել, հետախուզողների հետևակ խմբի գլխավորը վճռեց դիմել մի կատաղի միջոցի, — հարձակվել իր ամբողջ խմբով թշնամու ակոպների վրա: Գիշերը խաղաղ ճահիճը վրդովվեց հրացանների զարկերից, գնդակների ճայթուններից և թնդանոթների վորոտից: Սկսեց վորոտալ նույն իսկ լեհական արտիլերիան, վոր մինչև այդ լուռ եր... Թե ջրի վրա և թե Բերեզինայի յերկու ափերին ել սկսեցին թռչկոտել, վեր ու վայր անել թնդանոթների ումբերը, բարձրացրանելով ցեխի ու ջրի ամբողջ սյուններ:

Մինչև առավոտ չեր լուռ հրացանաձգությունը լեհացիների կողմից: Գունդը սպասողական դրության մեջ եր: Հետախույզ զինվորները, վորոնց անհամբեր սպասում էին ամենքը, դեռ չկային: Նրանց ոգնության ուղարկվեց մի վաշտ:

Վաշտը և հետախուշ գինվորները վերադարձան առավոտը, բերելով իրենց հետ յերկու լեհացի գերիներ: Գերիները, յերկու գյուղացի յերիտասարդներ, լայն, սովորական դեմքերով, հանգիստ եյին, նրանց դեմքի վրա յերկյուղի վոչ մի հետք չկար: Մեկի վոտքը վիրավորված էր և նա կաղում էր: Նա հագին ուներ միայն մի կոշիկ, իսկ մյուսը վերցրել էր ձեռքը ու շփոթված՝ ժպտալով նայում էր շրջապատող կար-



Գերին պատասխանում էր սիրով

միր բանակայիններին: Մերոնք՝ նստեցրին լեհացուն կոճղի վրա, հյուրասիրեցին թեյով, շաքար տվին և ապա սկսեցին հարցեր տալ նրան: Գերին պատասխանում էր ուրախությամբ, առանց ծածկելու:

Հետախուշ գինվորները յերկար ժամանակ որվա հերոսներն էյին դարձել: Նրանք իսկապես համարձակ գործ էյին կատարել: Դարանակալած մոտենալով

թշնամու ահուպներին, նրանք անսպասելի հարձակվում են պահապան գինվորների վրա, ապա, չթողնելով, վոր թշնամին ուշքի գա և ուշադրություն չդարձնելով հրացանաձգության վրա, մտնում են ահուպները, բռնում են յերկու քնաթաթախ, ապուշ կտրած լեհացիների և, առանց ժամանակ կորցնելու, յետ են վազում: Գիշերային խաղաղությունը ալեկոծող հրացանաձգությունը բարձրացել էր արդեն մեր հետախուշների յետևից: Պաները\* կատաղությունից ամբողջ գիշերը կրակում էյին, բայց իրենց կրակով նրանք վոչ վոքի վսաս չտվին: Դա նույնիսկ ոգտակար յեղավ, այն գինվորները, վորոնք մինչև այդ չէյին տեսել իրենց թշնամուն, համոզվեցին, վոր նա ավելի վտանգավոր չէ, քան Կոլչակի գինվորները, վորոնց հետ նրանք առաջուց գործ ունեցել էյին, — և սիրտ առան:

Այդ գիշերվանից կարծես ինքն իրեն դադարեցին այն բոլոր տրտունջները, վոր հետևանք էյին ճահճի մեջ գտնվելուն: Բոլորը զգում էյին, վոր ճահճային կյանքի վերջը մոտենում է:

#### ՀԱՐՁԱԿՈՒՄՆ

Այդ վերջը յեկավ անսպասելի կերպով: Մի յերեկո շտաբում հրաման ստացվեց, վոր յելնենք, իսկ գիշերը գունդը շղթաներով շարժվեց դեպի լեհական ահուպները:

Ճահճի վրա ծանրացած էր թանձր դեղնագույն մառախուղ: Վարագուրվելով այդ մառախուղով, գունդը հետգհետե ավելի և ավելի յեր մոտենում թշնամու

\* Պան — լեհացիները ասում են իշխաններին, կալվածատերերին, սովորական իմաստով — պարոն:

ակոպներին: Վաղ առավոտյան մենք պետք է գրոհ տայինք լեհացիների ակոպների վրա: Կովի հաջողութ- թյունը կախված էր նրանից, թե արդյոք կհարողա- նանք աննկատելի կերպով մոտենալ թշնամու ակոպ- ներին այնչափ, վոր կարելի լինի հարձակում գործել:

Մինչև ակոպները դեռ մեկ ու կես վերստ կա, բայց լեհերն արդեն նկատել են մեզ: Բ-բ-հ, — վո- բոտած թնդանոթը և նրա յետևից ելի ու ելի:

Ճիշտ է, ուռմբերը թռչում-ընկնում են մեր շղթա- ների յետևը, առանց վորևե մնաս հասցնելու հարձակ- վողներին, բայց վատն այն է, վոր լեհերը գիտեն գնդի հարձակման դիմելու մասին և այդպիսով չիք է դառնում մեր հարձակման անսպասելի լինելը: Սակայն յետ նահանջելն արդեն ուշ է: Քիչ ժամա- նակից հետո լույսը կբացվի և մեր շղթաները կգտ- նվեն լեհերի աչքի առաջ, ինչպես կռուսկները ճահ- ճային կոշտերի վրա:

Շտապ խորհրդակցելով կոմիսարի հետ, գնդի հրա- մանատարը վճռում է:

— Առաջ գնալ և գրոհ տալ թշնամուն: Գրոհի անհա- ջողության դեպքում III գումարտակը պետք է ծածկե գնդի նահանջը դեպի իր սկզբնական տեղը:

Շղթաները արագությամբ մոտենում էին ակոպ- ներին: Լեհական արտիլերիայի կրակը սաստկացավ և սկսեց նպատակին հասնել: Նրա սպանիչ գնդակ- ները ավելի և ավելի մոտենում էին մեր շղթաներին: Խավարը նսեմացավ: Ճահճի վրայից ծխի նման բար- ձրացավ գոլորշին: Գունդը արդեն բոլորովին մոտե- ցել է թշնամու ակոպներին: Նշմարվում է այդ ակոպների յետևը գտնվող գյուղը: Շղթաները արդեն

վազելով են առաջ գնում: Մոտեցել ենք... շուտ... Վաղ առավոտյան աղջամուղջի մեջ մի վարկյան փայլեց պուլեմյոտի կրակը: Լեհական ակոպներից սկսեցին տեղալ գնդակները: Կռիվը սկսվեց:

Բերեզինայի մյուս ափից լեհական ակոպների վրա սկսեց կրակ թափել կարմիր բատարեյան: Ճարձա- տելով՝ մեր գլխի վրայից թռչում էին կարմիր բատա- րեյայի ուռմբերը՝ հանգստացնելով ու խրախուսելով մարտիկներին:

Հետզհետե լուսանում էր: Պատան-պատան դար- ձած մառախուղը հալվում էր ողի մեջ:

Լույսը բացվեց:

Այժմ լեհերը պարզ տեսնում են կարմիր գլխավոր- ների շղթաները և նրանց թնդանոթները արձակում են մեզ վրա իրենց մահաբեր գնդակները ճշտու- թյամբ, սառն հաշվողությամբ: Վրիպել դժվար է: Հրաձգությունը դառնում է միաձույլ վոռնոց: Գնդակ- ները վզգում, զրնգում են ու խրվում ճահճի տղմի մեջ: Մահը հետզհետե ավելի և ավելի զոհեր է խլում մեր շարքերից:

Իսկ ակոպների յետևում մեծանում ու լայնանում է կարմիր բոցը, — այրվում է մեր բատարեյայի կրա- կից լեհական ակոպների յետևը գտնվող գյուղը:

Շղթան անդուսպ առաջ է գլորվում: Վորպեսզի չկոտորի իր գլխավորներին, կարմիր արտիլերիան լուռ է, նույնն է անում նաև լեհական արտիլերիան: Մեր գլխի վրայից վոռնոցով անցան մեր վերջին ուռմբերը, ողը ցնդելով լեհական ակոպների հողը: Գունդը գրոհ տվեց: Բայց լեհերի պուլեմյոտների և հրացանների կրակը քանի գնում ուժեղանում է: Չլիմացավ այդ

կրակին գիշերվա յերկար լարված սպասողութիւննից թուլացած ձախ թեւը, յերեւոյց: Ակոպներից քիչ հեռու պառկեց գետնի վրա 6-րդ վաշտը, նրա յետևից 5-րդը, 4-րդը...

Գրոհը չհաջողվեց: Վաշտերը իրար յետևից կաշուամ եյին գետնին. մարտիկները սկսեցին սողալով յետ նահանջել ակզբում դանդաղ, իսկ հետո արագութեամբ, մոռանալով, վոր խրախուսված թշնամու գնդակը նահանջի ժամանակ ավելի ճիշտ ե հարվածում:

Լեհական ակոպների ծայրերում յերևացին մարդիկ: Դա լեհերն էին ժողովում ակոպների մոտ, վորպեսզի հակահարձակում գործեն մեզ վրա:

Նորից կենդանացավ հրաձգութիւնը, վոր մի առժամանակ լռել եր, ճշոցով շող տալով կրակը նահանջողներին ամբողջ ճակատում և, կարծես մտրակով, զարկելով նրանց: Վաշտերը փախչում էին: Իզուր էին հրամանատարները աշխատում կանգնեցնել նրանց և նորից թշնամու դեմ դարձնել, նոր գրոհ տալ: Մարտիկները խառնվել էին իւրար, չէին լսում հրամանները:

Հրամանատարը և կոմիսարը խուզուտել էին, փորձելով կանգնեցնել մարտիկներին: Կոմիսարը ատրճանակը ձեռքին վազեց նրանց առաջը կտրելու: Լսվեց ատրճանակի չոր տրաքոցը և ամենից առաջ վազող զինվորը, վոր վարակում եր բոլորին սարսափով, մեռած վայր ընկավ: Սակայն դա չկանգնեցրեց փախուստը:

Յերկյուզից խելքը կորցրած և արդեն վոչինչ չգիտակցող մարտիկները թռչում են դիակի վրայից, ասես կոճղի վրայից: Միայն III գումարտակը չփա-

խավ: Պատասխանելով լեհերի կրակին, նա նահանջում եր կատարյալ կարգապահութեամբ:

Լեհերը խիտ ու սև շղթայով հետևում էին մեզ: Նրանց քայլվածքից զգացվում եր նրանց հանգիստ հավաստիութիւնը իրենց հաղթութեան մեջ: Յե՛վ այն ժամանակ, յերբ առաջին շղթաները հետապնդում էին նահանջողներին, ակոպների յետևից դուրս յեկող թշնամու նորանոր մասսաներ հեղեղում էին ճահիճները:

Պաները, ինչպես յերևում ե, հաստատապես վճռուել են Բերեզինա գետը մեր նոսրացած, խուճապով բռնված գունդը:

### III ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

III գումարտակի հրամանատարը հասկացավ լեհերի նպատակը: Հասկացավ և այն, վոր գունդը կանգնեցնել չի կարելի, վոր նա քայքայված ե և հարկավոր ե նրան անցկացնել Բերեզինայի մյուս ափը և այնտեղ կարգի բերել: Հասկացան այդ նաև գնդի հրամանատարն ու կոմիսարը:

Ամբողջ հուլիսը III գումարտակի վրա յե: Յեթե նա կարողանա պահել թշնամուն ու այսպիսով ժամանակ վաստակել, — գունդը ազատված ե:

Գնդի հրամանատարը և կոմիսարը ցրվեցին զանազան կողմեր: Հրամանատարը վազեց կարգի բերելու գետանցը և վաշտերը հավաքելու ափի մոտ, իսկ կոմիսարը գնաց III գումարտակ:

III գումարտակը նույնպես, յերբ սկսեցին տատանվել մյուս վաշտերը և հետո ամբողջ գունդը, քիչ եր մնացել, վոր յետ փախչելու նահանջող ընկերների

յետեից, բայց գումարտակի հրամանատարը, վոր մի ամբողջութեամբ, կոփված մարտիկ եր, և վաշտերի հրամանատարները, կարողացան պահել իրենց մարդկանց:

— Պառկեցեք, խփեցեք շղթաներին, վեց... զարկ. — լավում եր ողի մեջ վորոշ ու հաստատուն հրամանը:

Հրացանաձգութիւնը, վոր սկզբում անկանոն եր, ամեն մի զարկից հետո քանի գնում ավելի համարձակ ու անվրեպ եր դառնում և այդ անվրեպ կրակը սկսեց կանգնեցնել լեհերին:

— Պառկում են...

— Կանգ են առնում...

— Ավելի արագ կրակեցեք:

Հրացանաձգութիւնը հանգստացնում եր և իրենց, մարտիկներին և նրանց ուշադրութիւնը մի կողմ եր դարձնում ընդհանուր փախուստից: Լավ նշան դնելը ու հաշոյ կրակելը վոգեորում եր նրանց և նրանք հպարտութեամբ ասում էին մեկ-մեկու.

— Մենակ մենք ենք մնացել...

Գումարտակը անվրդով, քայլ առ քայլ, համառութեամբ ոգտագործելով հողի մի թզաչափն անգամ, յետ եր քաշվում թշնամու ճնշման տակ, վիրավորված գազանի նման վերքեր հասցնելով իրեն հալածողներին:

Բայց լեհական շղթաները քանի գնում, ձգվում են, խտանում են, նոր մարդիկ են առնում իրենց մեջ: Գումարտակը կարող է շրջապատվելու վտանգի մեջ ընկնել:

Գումարտակի հրամանատար Իվանովը գիտե իր գործը: Մեկ թեքվում է դեպի աջ, զարկում է լեհական շղթաներին և հետո խսկույն դեպի ձախ գցում

իրեն: Թշնամու չի հաշոյվում շրջապատել գումարտակի թևերը:

Մարտիկներն արդեն տաքացել են: Բոլորն էլ զգում են գումարտակի վրա ընկած պատասխանատվութեան չափը: Գումարտակում կան բավական թվով մարտիկներ, վորոնք կռիվների մեջ են գտնվում քաղաքացիական պատերազմի սկզբից, իսկ ինքը, հրամանատարը, իմպերիալիստական պատերազմի ունտերոֆիցեր է, սառնարյուն, փորձված:

Իվանովը գնդի կոմիսարի հետ, շղթայի յետևը, խսկույն խորհրդակցում է գործի դրութեան մասին: Այստեղից յերևում է, թե ինչպես լեհական ուժերը պայթում են գետի վրա, և ինչպես լաստի ոգնութեամբ շտապով գետի մյուս ափն են փոխադրվում մեր գնդի նահանջող մասերը: Լեհական արտիլերիան կրակում է անխնա ճշտութեամբ. ափին խոնված ամբոխը նրա համար շատ լավ կրակելու նշան է: Շատերը չեն դիմանում, ափից և նույն իսկ լաստից իրենց գցում են գետը, վոր լողալով անցնեն, և խեղդվում են:

Մյուս ափում նույնպես պատրաստ են պուլեմյոտները: Կարմիր բատարեյայի արագ կրակը ջարդում է լեհերի խիտ շղթաները: Բայց լեհերը, նախատեսելով հաղթութիւնը, հարբել են հաշոյութիւնից:

Կանգ առնելով հրաձգութեան ընդմիջումներին, նրանք նորից բարձրանում են և արագ առաջ շարժվում:

Գումարտակը ստիպված է արագացնել իր նահանջը: Գնդից ոգնութիւնն սպասելը իզուր է. այնտեղ, գետի մոտ, մարդիկ միայն մի ցանկութիւն ունեն, —

շուտով անցնել մյուս ամիը և պաշտպանություն գրտ-  
նեն գետի և սեփական գնդացիները ու մարտկոց-  
ների կողմից:

Գնդի հրամանատարին հաջողվեց դժվարութեամբ՝  
կոմանդիրների բղավոցների ու ստիպումների տակ  
շղթայաձև ցրել գետի ամիին մի վաշտ, բայց հենց վոր  
նա մոտեցավ գետանցի տեղին, նրա յետևից իսկույն  
զինվորներն ել անկանոն խմբերով վազեցին նույն  
տեղը:

Լեհերը շարժվում են արդեն առանց կանգ առ-  
նելու, առաջ են վազում առանց թագնվելու, ստվար,  
միալար շղթայով: Թվում է, վոր վոչ մի ուժ չի կա-  
րող կանգնեցնել նրանց:

Դեռ բոլորը չեն անցել գետը, դեռ բավական  
ժամանակ է հարկավոր դրա համար: Յեթե թշնամին  
հասնի ամիին, նա սվիններով ու հրացանի կոթերով  
բոլորին կթափի գետի մեջ, ովքեր ամի վրա յեն  
գանավում: Անհրաժեշտ է վերջին միջոցին դիմել:

Մի կարճ ժամանակ կանգ առնելով ակոպներում  
վորտեղ մի քանի ժամ առաջ գունդը անգործությու-  
նից ձանձրացած պահանջում էր, վոր իրեն թշնամու  
դեմ դուրս բերեն, գումարտակի հրամանատարը վճռեց  
մոտ թողնել լեհերին հարյուր քայլ տարածության  
վրա: Ակոպներում տիրեց լուռություն: Մարդիկ ձեռ-  
ների մեջ ամուր սեղմեցին անդադար կրակելուց տա-  
քացած հրացանները: Յերբ լեհական շղթաները մո-  
տեցան, լուռ ակոպները հանկարծ կենդանացան:  
Գումարտակի գնդացիները սկսեցին տեղալ գնդակ-  
ների կարկուտ: Թշնամիները կռացան և ապա կանգ  
առան անվճռականության մեջ:

— Ուռն, յեկեք յետևիցս, — գոչեց գումարտակի  
հրամանատարը:

Գումարտակը հրացան արձակելով հարձակվեց  
թշնամու վրա: Լեհերը ցնցվեցին, խոնվեցին ու փա-  
խան: Շփոթությունը յերկար չտևեց, բաց անհրա-  
ժեշտ ժամանակը արդեն ձեռք եր բերված. վերջին  
զինվորները լաստերի վրա անցնում էին գետի մյուս  
ամիը: Գունդը համարյա ազատված է, III գումար-  
տակի հակահարձակումը հինգ անգամ ավելի ուժեղ  
թշնամու դեմ նրան թանգ նստեց: Ինքը, գումարտակի  
հրամանատարը, վոր վոզևորել — տարել եր իր յե-  
տևից մարդկանց, վերք եր ստացել փորի վրա...

Գումարտակի հրամանատարին պառկեցրին ակոպի  
մեջ գետնին փռած շինելի վրա: Հին մարտիկի գու-  
նատված շրթունքները ամուր սեղմված էին, դեմքը  
հողագուն էր դարձել և միայն բաց աչքերն էին  
վկայում, վոր նա կենդանի յե: Նրա փորը ցրիվ եր  
սովել ճայթած գնդակը, — աղիքները համառութեամբ  
դուրս էին գալիս բաց վերքից, մատերն ու շորերը  
արյունաշաղախ էին: Արյունը լիճ եր կապել վիրա-  
վորի տակ:

— Ընկերներ, սպանեցեք ինձ, — աղաչում եր նա  
գառանցանքի մեջ:

Մարտիկները մռայլ հայացքով նայում էին իրենց  
առաջ, սեղմելով ձեռքի մեջ հրացանը:

Գումարտակի հրամանատարությունն իր վրա  
առավ կոմիսարը:

Մինչ գումարտակը հակահարձակում եր կատա-  
րում, լեհերի մի մասը մոտեցավ գետամին և վոչն-  
չացրեց գետանցի շարժումները: Գումար-



տակը մնաց կտրված, ամուր սեղմված ափին: Թի-  
կունքում գանվում եր դեպի ամեն ինչը անտարբեր  
գետը և զգզված գունդը, վորը վոչնչով չեր կարող  
ոգնել գումարտակին: Առջևից — վրա հասնող, մի քանի  
անգամ ավելի ուժեղ թշնամին ե, վոր ձգտում է վոչն-  
չացնել գումարտակը և գետը ձգել նրան: Արտիլե-  
րիան չեր գործում: Լեհական ավելի ուժեղ արտիլե-  
րիան վոչնչացնելով մեր թնդանոթները մեկը մյուսի  
յետևից, գրկել եր գումարտակը ուժեղ պաշտպանու-  
թյունից և մեր բախտիցն եր, վոր գումարտակը նե-  
ղություն չեր քաշում գնդակների և պուլեմյոտների  
ժապավենների, վորովհետև նահանջած վաշտերը գե-  
տափին մեծ պաշար եյին թողել զբանցից:

Գումարտակի վիրավորված հրամանատարին վորո-  
շեցին, ինչ գնով ել լինի, փոխադրել գետի մյուս  
ափը: Մեջ ընկան չորս կամավորներ, բայց վոչ  
նավակներ կային և վոչ ել գերաններ: Գետը կարելի չե  
անցնել միայն լողալով: Վտանգավոր գործ եր, ամեն  
վայրկյան գետանցքի ժամանակ լեհական գնդակը կա-  
րող եր սպանել վիրավորին և նրան ազատողներին:  
Բայց և այնպես վիրավորված հրամանատարին շինելի  
մեջ տարան մինչև գետափը: Սկսեցին տկլորվել:

Հրամանատարը շատ լավ գիտե, վոր, յեթե մնա  
այստեղ, անպատճառ կորչելու չե, բայց հին մարտիկը  
չի կարող հաշտվել այն մտքի հետ, վոր նրա պատ-  
ճառով մարդիկ իրենց անխուսափելի մահվան են դա-  
տապարտում:

— Կանգնեցեք, — հրամայում է նա:

Կարմիր զինվորները լուրջան շարունակում են  
իրենց գործը:

— Ընկերներ, թողեք... Ավելի լավ է սպանե-  
ցեք... Այստեղ ամեն մի սվինը արժեք ունի, իսկ  
դուք ինձնով եք զբաղված...

Կարմիր զինվորները լուռ են ու մուսյլ:

— Ընկերներ, — խորամանկության ե դիմում հրա-  
մանատարը, — կանգնեցրեք ինձ... Յես ինքս...

— Դա կարելի չե:

Նրան կանգնեցնում են: Լարելով վերջին ուժերը,  
ամուր սեղմելով ատամները, վորպեսզի չճչա անասելի  
ցավից, նա յերկու արագ քայլերով իրեն գցում է գետը:

Ջուրը անտարբեր փայլեց. նրա ծփացող կոհակները  
շարժվեցին գետի մակերևույթի վրա և անհայտացան:

III գումարտակի հրամանատարը այլևս չկար:

Մյուս ափից տեսան հրամանատարի մահը, տեսան  
գումարտակի ծանր դրությունը, նրա դանդաղ, ան-  
խուսափելի կորուստը անհավասար կռվի մեջ, բայց  
վոչնչով ոգնել չեյին կարող: Գետը կարել եր գումար-  
տակը մնացած բոլորից: Բոլոր լաստերը վոչնչացված  
եյին իսպառ:

Փորձեցին լաստ շինել կոտրված լաստերի մնա-  
ցորդներից, բայց հենց վոր գետը ձգեցին այն, լեհերը  
պուլեմյոտների մրրկային կրակով վոչնչացրին նրա  
վրայի մարդկանց: Մարդիկ իրենց գցեցին գետը, վոր  
լողալով ազատվեն և միայնակ լաստը գետի հոսան-  
քից արագությամբ անհայտացավ:

## ՃԵՂՔՈՒՄՆ

Լեհերը մի գրոհը մյուսի յետևից եյին տալիս:  
Նրանք վճռել եյին անպատճառ կոտրել կարմիրների  
համառությունը: Բայց գումարտակը անդրգվելի չե,

նահանջելու տեղ չկա և յեթե կա ազատութիւն, դա առջևումն ե: Մարտիկները ժամանակ չունեցին ուրիշ բանի մասին մտածելու. նրանք տենդային արագութեամբ շարժում եյին հրացանների սողնակները, գնդացիներին ժապավենները կատաղի արագութեամբ փոխարինում եյին իրարու:

Հրամանատարների և քաղցեկավարների խորհրդակցութեան մեջ կոմիսարը փորձող հայացքով նայելով ներկա գտնվողներին, ասաց.



Լեհերը վճռել եյին անպատճառ կոտորել կարմիրների համառութիւնը

— Յերկու յելք կա մեր դրութեան մեջ: Առաջինը՝ անձնատուր լինել:

Յեկ լուեց: Մարդկանց դեմքերը առաջվա նման սառն, հանգիստ ու վճռական եյին:

— Կա նաև յերկրորդ յելքը, — փորձել պատուել լեհերի շղթան և հետո, հեռանալով նրանցից, անցնել

մեր ափը: Յես առաջարկում եմ խորհել այդ յերկու առաջարկութիւնների մասին, — վերջացրեց կոմիսարը:

Առաջին «յելքի» մասին վոչ վոք վոչ մի խոսք չսաց: Քննում եյին միայն յերկրորդ առաջարկութիւնը: Վճռեցին դիմանալ մինչև մութը ընկնելը և այնուհետև փորձել պատուել լեհական շղթաները: Վճիռը հաղորդվեց կարմիր բանակայինների շղթաներին: Մարտիկները ընդունեցին այդ վճիռը հաճութեամբ և, պահպանելով անընդհատ հրաձգութիւն, սկսեցին շուտափույթ ամրացնել ակոսները:

Հասկանալով, վոր գումարտակը ամրանալով, շատ հոգսեր ե պատճառելու իրենց, լեհերը գորասյուններով առաջ շարժվեցին հարձակում գործելու: Նրանց արտիլերիան լուեց: Հակառակորդները այնչափ եյին մոտեցել իրար, վոր հեշտութեամբ կարելի յեր վրասել և իրայիններին:

— Անձնատուր յեղեք, — վագելով գոչում եյին հարձակվողները:

— Լեհական սրիկաներին լավ կրակեցեք, — պատասխանում եր կոմիսարը, ճգնելով իր խուսափած ձայնը հասցնել ամենքին:

Լեհերի յերեք հարձակումները մեծ կորուստներով յետ մղվեցին: Նրանք չնկատելով իրենց կորուստը, հարբածների նման հարձակվում եյին ակոսների վրա: Բայց նրանց չհաջողվեց խորտակել գումարտակը:

Արեգակը անցնում եր անտառի յետևը: Ծիրանագույն ամպերը լողում եյին յերկնքում, արտացոլելով իրենց լույսը սվինների վրա և վոսկեգոծելով կովողների շղթաները: Վրա յեր հասնում յերկար սպաս-

ված, բայց շատերի համար վերջին միջնադր: Մթու-  
թյան մեջ սպասվում էր հաջողութուն, իսկ ան-  
հաջողության դեպքում՝ կատարյալ մահ: Կոմիսարը  
գիտեր, վոր մինչև գիշեր պաները փորձելու յեն մի  
անգամ էլ վոչնչացնելու գումարտակը: Նա ծնկները  
վրա սողալով անցնում էր ահուպները, խոսում էր  
վաշտերի գլխավորների և մարտիկների հետ: Նա պատ-  
րաստում էր գումարտակը վերջնական կռվի համար:  
Այդ կռիվը մոտենում էր:

Լեհական հրամանատարութիւնը կորցնում էր իր  
համբերութիւնը: Յեւ պատճառ էլ կար: Ամբողջ որը  
լեհական լավագույն գունդը (Պոզնանի), վոր գերմա-  
նական շկուլան էր անցել, չէր կարողանում հաղթել  
մի խումբ կարմիր բանակայինների, խիստ հարվածներ  
էր ստանում նրանից:

— Այսոր իսկ, մինչև գիշերը հասնելը, բոյլը կիյան  
գումարտակը պիտի վոչնչանա, — հրահանգում էր  
Պոզնանի բրիգադի հրամանատարի վերջին կարգադրու-  
թիւնը, վոր մենք գտանք սպանված լեհ ոֆիցերի վրա:

Մութը շուտ վրա հասավ: Գետից սկսեց բուրել  
խոնավութիւն, բարակ սարդոստայնի նման բարձրա-  
նում էր մառախուղը...

Լեհերը մի անգամ էլ հարձակում գործեցին մեր  
ահուպների վրա: Առանց հրաձգության նրանց դեմ,  
կարմիր գումարտակը սվինները բարձրացրեց: Մար-  
տիկները պատրաստ էին ամեն ինչի և սարսափելի  
էյին իրենց վճռականութեամբ... Լեհերը մոտենում են  
ու մոտենում, 200... 100... 50 քայլ հեռու կարմիր-  
ներից: Տիրեց կատարյալ լռութիւն: Յեւ հանկարծ  
կարմիրների շղթայից մեկը խռպոտ ձայնով սկսեց յեր-

գել. «Յելիբ, ում կյանքը անիծել ե»... Ամբողջ գու-  
մարտակը միացավ նրան: Չայները միանգամից բար-  
ձրացան, տարածվելով Բերեզինայի ու ճահճի վրա՝  
մտցնելով գումարտակի տանջված մարտիկների սիրտը  
կռվի ուրախութիւնն ու անվեհերութիւնը:

Առանց հրամանի, հիմնի հնչյունների տակ գու-  
մարտակը հարձակվեց լեհերի վրա, սվինների ուժեղ  
հարվածներով պատռեց լեհական շղթաները և հրա-  
ցանները կրակ տալով, անցավ գիշերվա խավարի միջից  
ճահճային մառախուղի ու խիտ փշակույտերի մեջ:

Առավոտյան, գումարտակը Բերեզինան անցնելով,  
հոգնած, վերին աստիճանի տանջված, բայց հպարտ  
ու հաղթական վոգով՝ միացավ գնդին...

#### ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Հոգնած, քաղցած, պատառոտված շորերով, վոշ-  
լտոված, մենք նահանջում էյինք դեպի Բելոստոկ: Մի  
քանի որ մեր փոքրիկ շոկատը կերակրվում էր միայն  
կարտոֆիլով և այն էլ առանց աղի: Թիկունքը մեղա-  
նից կտրվել էր և շատ առաջ ընկել, իսկ քայքայված  
ազգաբնակչութիւնը թափառում էր անտառներում  
և կերակրվում էր թռչունների նման:

Բելոստոկ մենք մտանք վաղ առավոտյան, գյու-  
ղական սայլերով, համարյա առանց լորևե գենքի, պու-  
լեմյոտները կողպեքներ չունէյին, իսկ հրացանները՝  
պատրոններ: Զինվորականների մենք շատ քիչ էյինք  
նմանվում: Բելոստոկում բոլորը քնած էյին, լուսամուտ-  
ները ծածկված, վարագույրները իջեցրած: Մեզ՝ ավա-  
զոտ ճանապարհների, քարքարոտ դաշտերի ու այրված  
գյուղերի մեջ վայրենիացածներին՝ այդ փոքրիկ կեղ-

տոտ մեղչանական քաղաքը թվում էր մայրաքաղաք:

Սակայն խաղաղությունը խաբուսիկ էր: Նոր էինք մենք կենտրոնական փողոցը մտել, յերբ պատուհանից ու զոներից մեր կտորված ու ճոճուան սայլերի վրա տեղացին գնդակներ: Մի քանի վայրկյան ևս, — ձեռքի ումբի պայթուներից մեր առաջին սայլը և նրա վրա նստած մարդիկ շարդուփշուր յեղան: Այդ պայթուներից հետո լավեց պուլեմյոտի ճարճատյունը: Մենք ընկել էինք մի քաղաք, վորտեղից մեր զորամասերը արդեն հեռացել էին:

Մենք պատրոններ չունեինք, իսկ թշնամին նստած էր քարե տների մեջ անտեսանելի ու անխոցելի: Մենք դիմադրելու ուժ չունեինք, մնում էր միայն մի յեղք. ցրվել նրբափողոցներում և վորքան կարելի յե, շուտով հեռանալ քաղաքից:

Իմ առջևից կայծակի արագությամբ վազում էր մի կարմիր բանակային: Յես ընկա նրա յետևից: Մի տասը ըուպե վազում էինք: Յերևացին քաղաքի ծայրերը, կայարանը:

Յերկաթուղու գծի վրա պատրաստ շոգեկառքով մի եշելոն պատրարստվում է ճանապարհ ընկնելու. վազելով բացում էմ տեպլուշկայի դուռը և ումբի պես ներս թռչում:

Վոչ վոք չկա տեպլուշկայում (հասարակ ապրանքատար վագոն). սակայն թվում է, վոր նոր են մարդիկ հեռացել այնտեղից և, ըստ յերևույթին, շտապով, վորովհետև մոռացել են սեղանի վրա նույնիսկ հացը և կաթով ու մածոնով լի անոթը:

Ժամանակ չկա մտածելու՝ թե սա ինչ գնացք է, ուր է գնում, ում համար է պատրաստված: Չափա-

կանց շատ զրկանքներ ենք կրել անցյալում, ուստի քաղցած փորը հրամայում է — կեր:

Յես վրա պրծա կաթին և մածնին: Բայց վորքան շատ էր լցվում փորս, այնքան ավելի պարզվում էր ինձ համար, վոր նստելով այստեղ, յես անուղղելի սխալ եմ գործում:

Ձգուշությամբ սեղմվելով վագոնի պատին, յես մի աչքով դուրս նայեցի և իսկույն յետ քաշվեցի:

Կայարանում, ուղիղ «իմ» չարաբաստիկ վագոնի դիմաց կանգնած էր մի սուղաթ, ֆրենչը հագին, գլխարկի վերևը քառանկյունի:

— Լեհ է:

Առանց աղմուկի անցնելով վագոնի անկյունը, յես արագ շարժումով փոկից հանեցի ու մի կողմ գցեցի ատրճանակս ու պատուտեցի դոկումենտներս: Թղթի կտորները կոխեցի վագոնում գտնված ցնցոտիների մեջ: Բայց հետո: Դուրս գալ անհնարին է: Տեպլուշկայի դիմացի դուռը դրսից ամուր կողպված է: Կայարան դուրս գալու մասին մտածել անգամ չի կարելի, այնտեղ պահապան կա:

Անիծելով ինձ հրապուրող կաթը, յես անձկությամբ սկսեցի սպասել, թե ինչ դուրս կգա այս ամենից: Հույսս միայն նրա վրա յե, վոր պահակ զինվորները պաշտպանում են գնացքը և ինձ մոտ, վագոն չեն մտնի:

Բայց մի ըուպեյից հետո իմ բոլոր հույսերս ողբ ցնդեցին: Բաց զոնից ներս մտավ առաջ սվինը և ապա քառանկյունի գլխարկով ծածկված գլուխը:

— Բարձրացրե՛ք ձեռքերդ:

Ստիպված էյի հնազանդվել:

Չինվորը դուրս հանեց ինձ վագոնից և, սվինով թեթև հրելով մեջքիցս, տարավ մի դատարկ բուդկա և այնտեղ խուզարկեց ինձ: Իմ դանակը, վոր հավատարմությամբ ծառայել եր ինձ քաղաքացիական ամբողջ պատերազմի ընթացքում, մտավ լեհի լայն գրպանը, հետո ժամացույցս, իսկ դրանից հետո նույնիսկ փոկը, վոր դուր եր յեկել զինվորին: Ապա ինձ դուրս բերին փողոց, վորտեղ կանգնած եր գերի կարմիր բանակայինների մի խումբ, — բոլորն ել ծանոթ դեմքեր, ծանոթ մարտիկներ, վորոնք ինձ հետ բաժանել են նահանջի բոլոր դժվարությունները: Յես ինձ այնպես ցույց տվի, վոր վոչ վոքի չեմ ճանաչում և խառնվեցի նրանց շարքերին:

Գերիներին պահպանում եյին մի խումբ զինված հասարակ քաղաքացիներ: Մայթի վրա յետ ու առաջ ման եր գալիս անճոռնի տեսքով, բարձրահասակ մի մարդ, յերկարավուն ձիու դեմքով, — դա բուրժուական պահակների գլխավորն եր: Նա դրել եր շյապա, հագել եր պինջակ, ձեռնոցներ և մինչևիսկ փայլուն, լայկովի կոշիկներ, իսկ և իսկ կարծես խնճուղից եր յեկել: Ձեռքին ուներ հրացան: Մնացած բոլոր սպիտակ սրիկաները և նույնիսկ մի քանի զինվորականներ հարգանքով կանգնած եյին նրա առաջ: Յերևում եր, վոր խաժամուժը նրան իր պետն եր համարում:

Բաղաբը արթնացավ, փողոցը յելավ: Հետաքրքրվողները խմբվում եյին փողոցների անկյուններում, թամաշա եյին անում մեզ, վորպես չտեսնված վայրենի գազանների: Վորջան մոտենում եյինք քաղաքի կենտրոնին, այնքան ավելի աղմկալի ու բազմամարդ եր դառնում լավ հագնված քաղաքացիների ամբոխը:

Բոլոր մայթերից լավում եյին հայոյանքներ և սպանալիքներ: Մեկը քար գցեց մեր խմբի վրա, իսկ մի շատ լավ հագնված կին, վագելով պահապանների առաջ, ճանկուտեց մի փոքրահասակ նիհար կարմիր բանակայինի յերեսը, վոր գտնվում եր առաջին շարքերում.

— Բոյլընիկ, շան արյուն... Ձհուդ...

Կարմիր բանակայինը կարմրեց բարկությունից և բուռնցքները բարձրացրած հարձակվեց կախարդի վրա: Յեթե պահապանը չհեռացներ կատաղած կնոջը, յերկի մի լավ կռիվ տեղի կունենար. կարմիր բանակայինները սկսեցին աղմկել և թևները քշտել...

Մեզ տարան մի մեծ քառանկյունի բակ, վորտեղ կային քարաշեն սարայներ: Կանգնեցրին յերկու շարքով և այդ շարքերը հեռացրին իրարուց 12 քայլ տարածություն: Յեկան լեհական ռիցերները և նրանց հետ այն նույն աշխարհիկ քաղաքացին՝ հրացանը ձեռքին, վորին մենք տեսել եյինք փողոցում: Հրաման տվեց.

— Ձուզներ և կոմունիստներ, յերկու քայլ առաջ անցեք:

Շարքերը չեն շարժվում: Ռիցերը յերկար հայնոյում ե ոռուսերեն և նորից կրկնում հրամանը: Շարքերը անշարժ են առաջվա նման:

Ռիցերների ամբողջ խումբը և ճերմակ գվարդեյականը ուղղվեցին դեպի մեզ: Ուշադրությամբ նայելով յուրանքաշյուրի դեմքին, նրանք ժամանակ առ ժամանակ խլում եյին շարքից վորուկե մեկին, վորը նրանց կասկածելի յեր թվում, կամ նմանում եր հրեայի: Այդպիսիներին մի կողմ եյին տանում և հանձնում զինվորներին:

Հերթը իմն ե: Աշխարհիկ պարոնը լռելյայն ցույց ե տալիս իմ գլուխը: Յես չեմ հասկանում, թե բանը ինչումն ե: Այն ժամանակ, բարկութունից ծռմուռելով իր յերկար դեմքը, բռունցքի մի հարվածով նա վայր ե գցում իմ գլխարկը և հրացանի կոթով խփում մե ջքիս: Միայն այդ ժամանակ յես գլխի ընկա, վոր նրան կատաղացրել եր իմ գլխարկիս կարմիր աստղը:

Մեզ տեղավորեցին քարաշեն խոնավ սարայներում: Անցնում եյին անհայտության ու ակնկալության տանջալից ժամերը: Մեզ ցույց տված ընդունելութունից պարզ եր, վոր ամեն ինչ կարելի յեր սպասել, և՛ վերավորանք, և՛ տանջանքներ և, շատ կարելի յե, նաև մահվան պատիժ: Մեր միջից կոմիսարներ և կոմունիստներ գտնելու հույսը լեհերը դեռ չեն կորցրել: Գերիներին մեկը մյուսի յետևից տանում են, հայտնի չե, թե ուր և ապա նրանք վերադառնում են սաստիկ հոշոտված կերպարանքով, կապտած, արյունաշաղախ, արյուն թքելով: Պարզ ե. չարչարում են, ուզում են տեղեկութուններ ձեռք բերել, հասնել իրենց նպատակին: Առայժմ վոչ վոք չի մատնում...

Հետևյալ որը մեր բանտը մտան անդեն քաղաքացիներ, բերելով իրենց հետ հացով լի զամբյուղներ: Նրանցից վոմանք սկսեցին բաժանել հացը, մյուսները, ուշադրությամբ նայելով գերիների դեմքերին, սկսեցին հայոյել ավազակ-բոյլշևիկներին և գովել կյանքը «ազատ» և հաստատնում, ամեն կերպ համոզելով մեզ, վոր բոյլշևիկները իսպառ շարդված են, վոր նրանց իշխանութունը շուտով ընկնելու յե և վոր մեզ՝ գերիներիս համար այստեղ վոչ թե կյանք, այլ արքայութուն կլինի: Այցելուները խոսում եյին անհանգիստ

յեղանակով, շղայնորեն և վերջացնում եյին, նորից առաջարկելով ցույց տալ կոմունիստներին:

Մենք բոլորս գերեզմանային լուսթյուն եյինք պահպանում, սակայն գերիներից յերկու-յերեք հոգի անվստահ կերպով ձեռքերի ու գլուխների շարժումներով, բացականչութուններով հավանութուն եյին տա-




Հետևյալ որը մեր բանտը բերն հացով լի զամբյուղներ

լիս լեհերի խոսքերին: Մեզ համար պարզ եր, վոր մեր շարքերում կային կուլակների վորդիներ, վորոնք պատրաստ են մեզ դավաճանելու: Թվում եր թե՛ մի ճնշում ևս — և այդ հավանութուն տվողները, հրավորվելով քաղցր խոսքերից, մեզ կմատնեն:

Լեհական ազիտատորները հեռացան: Մենք նորից մենակ մնացինք մեր մտքերի հետ: Յես քաշվեցի մի մութ անկյուն: Միտքս համառությամբ հնարներ եր վորոնում փախչելու, գլխումս պար եյին բռնել ամե-

նաանհնարին պլաններ, սակայն հողնաձուլությունը հող-  
թեց: Յերագելով փախչելու մասին, յես ընեցի, կուշ  
գալով խոնավ անկյունում:

Խորը գիշերով մենք զարթնեցինք հրացանաձգու-  
թյան զարկից: Ամբողջ սարայը վոտի վրա յեր արդեն:  
Մթության մեջ լավում եյին խուլ ձայներ, շշնջոցներ,  
խոսակցություններ: Վոչ վոր մեզանից չեր կասկածում,  
վոր գնդակահարում են գերիներին մյուս սարայնե-



Սառհատակի քարերը դրդացին ձիերի սմբակների տակ

րում: Չարկը կրկնվեց: Սրտնեղությունը սեղմում եր  
մեր հոգին: Դադարեցինք շշնջալ, ամեն ինչ լռեց:

Նորից լավեց խուլ դրդոյուն, բայց դա հրացանա-  
ձգության ձայն չե. դրդում ե արտիլերիան: Ռում-  
բերի պայթումը հետզհետե ավելի և ավելի վորոշակի  
յե լավում... Մի քանի րոպե ևս և դռները մոտ սալ-  
հատակի քարերը դրդացին ձիերի վոտների տակ...  
Դրանից անմիջապես հետո մի խլացուցիչ հարված  
ցնցեց քարաշեն սարայի պատերը, — ուումը խոր-

տակեց մի ամբողջ շինություն: Մեր սարայի ծակե-  
րուց յերևում եյին փոշու ամպեր:

Առանց խոսքերի, կարծես պայմանավորված իրար  
հետ, մենք վազեցինք դեպի դուռը և, ընկնելով նրա  
վրա, կտրեցինք ամուր փեղկերը: Լեհերը չկան: Մենք  
ազատ ենք...

Գրողնոյում մենք իմացանք, վոր մեզ ազատել ե  
հռչակավոր 27-րդ հրացանաձիգ դիվիզիան, վորը նա-  
հանջում եր Վարչավայի մոտից մարտական կատարյալ  
կարգապահությամբ: Այդ առավոտ դիվիզիան խուժեւ  
եր քաղաք, վոր գրավել եյին լեհերը:



ՊԱՀԱՆՋԵՑԵՔ

ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎՈՐ

ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶՐԻ.

ԴԻՄԵԼ՝ Москва, Никольская, 10.

ЦЕНТРИЗДАТ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0318686

15 члм.  
х.

2527

11.753



---

---

С. КОТОВ

На Березине

(Перев. с русск.)

---

---

На армянском языке

---

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.  
Москва, центр, Никольская, 10.

891.71

4-77